ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«14» Նոյեմբերի 2022թ. N ՄՈ/663-Ա

ք. Արմավիր

«ՄԵՐՁԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԶԱՐՈՒՀԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Զարուհի Ստեփանյանի 2022 թվականի նոյեմբերի 14-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Մերձավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Զարուհի Ստեփանյանին 2022 թվականի նոյեմբերի 16-ից 22-ը ներառյալ տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 5 աշխատանքային օր տևողությամբ:
2. Զարուհի Ստեփանյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Մերձավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Մերձավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Էմմա Թորոսյանին:
3. 2022 թվականի նոյեմբերի 16-ից 22-ը ներառյալ «Մերձավանի միջնակարգ դպրոց»պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Էմմա Թորոսյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Զարուհի Ստեփանյանին աշխատանքի մեջ համարել 2022 թվականի նոյեմբերի 23-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ, ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Недействительная подпись

VERIFIED OCSP 14.11.2022 17:55:40 GMT+4

Подписано: AVETISYAN ARNAK 2714860109